

Հարց

Կազմակերպությունում մինչև վեց ամիս աշխատած աշխատողին՝ աշխատանքից ազատվելու դեպքում վճարվում է, արդյո՞ք, չօգտագործված արձակուրդի համար հատուցում:

Պատասխան

Աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝ մինչև վեց ամիս աշխատած աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն չօգտագործված ամենամյա արձակուրդի համար աշխատողին վճարում է դրամական հատուցում, որի չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով:

Հարց

Անհատույց ստացված հումքը ի՞նչ արժեքով է մուտքագրվում կազմակերպություն և ինչպիսի՞ հարկային պարտավորություններ են առաջանում:

Պատասխան

Ընկերության կողմից անհատույց ստացված հումքը մուտքագրվում է ընդունման հանձնման փաստաթղթերի տվյալներով, և եթե այդ փաստաթղթերում նշված չէ գույքի արժեքը, ապա այն գնահատվում է տվյալ ռեզիդենտի մոտ առկա համանման գույքի արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ ռեզիդենտի մոտ ձևավորված հանձնաժողովի կողմից իրականացված փորձաքննության եղանակով որոշված արժեքով: Ընդ որում, «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, անհատույց ստացված հումքը ընկերության համար եկամուտ է համարվում այն հաշվետու տարում, երբ այն ճանաչվում է որպես ծախս կամ կորուստ (անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից):

Օրինակ, 2016 թվականի ընթացքում ընկերությունը անհատույց ստացել է 1000.0 հազար դրամ արժեքով հումք: Նույն հաշվետու տարում այն ամբողջությամբ օգտագործվել է ներքնակների արտադրության համար, որոնց իրացումից հասույթը կազմել է 1600.0 հազար դրամ (առանց ԱԱՀ-ի): Ընկերության կողմից տվյալ տարվա ընթացքում կատարված ընդհանուր նվազեցման ենթակա ծախսերը (ներառյալ հումքի 1000.0 հազար դրամ արժեքը) կազմել են 1400.0 հազար դրամ:

Տվյալ պարագայում ընկերության հաշվետու տարվա հարկվող շահույթը կկազմի 1200.0 հազար դրամ (1600.0 հազ. դրամ+ 1000.0 հազ. դրամ (անհատույց ստացված հումքի արժեք) – 1400.0 հազ. դրամ):

Հարց

Կազմակերպությունն իր կողմից հիմնադրված այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով անշարժ գույքի տեսքով ներդրում կատարելիս, արդյո՞ք, կրում է ավելացված արժեքի հարկի պարտավորություն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ իր կողմից հիմնադրված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի

ավելացման նպատակով անշարժ գույքի տեսքով ներդրում կատարելիս կազմակերպության համար առաջանում է ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորություն:

Հարց

Փոխառության պայմանագրով նախատեսված փոկոսային եկամուտների մասով կազմակերպությունը կրո՞ւմ է, արդյոք, ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ փոխառության տրամադրումը ազատված է ավելացված արժեքի հարկից:

Հարց

Որն է հաշվետու ժամանակաշրջանի համար դուրս գրված և մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքում հարկային հաշիվների վերաբերյալ չներառված տեղեկությունները հետագայում հարկ վճարողը ինչպե՞ս պետք է ներառի տեղեկանքում:

Պատասխան

Տեղեկանքում դուրս գրված կամ մատակարարներից ստացված առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չներառելու կամ դրանք սխալներով ներկայացնելու փաստը ինքնուրույն հայտնաբերելու դեպքերում հարկ վճարողը այդ հաշիվների դուրսգրման կամ ստացման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնում է ճշտված տեղեկանք:

Հարց

Ի՞նչ ժամկետում և կարգով է վճարվում սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված նպաստի գումարը:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պակաս վճարված նպաստի գումարը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման, ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից՝ սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: